

միկոնյան նույն իշխանի «Կտակը», որը նա «Ի թուին ՇԾԳ (1104) բազում աշխատութեամբ... ի գլուխ եհան»³։ Հետո տարբեր ժամանակներում, տարբեր առիթներով այդտեղ հիշատակություններ են թողնում վանքի առաջնորդներից, միաբաններից, նվիրատուներից ու այցելուներից ոմանք։ «Պատուեալ յամենայն ժամանակի յուխտաւորաց»⁴ ձեռագիրը հետագայում բանասիրության և արվեստագիտության մեջ է մտնում որպես Մշո Տօնական կամ Մշո Ճառքնտիր ոչ միայն այնտեղ պահվելու, այլև Մուշում գրված և ծաղկված լինելու համար։ Մեծ եղեռնի օրերին, Մշո Տօնականը իր ժողովրդի նման, հարկադրաբար թողնում է իր դարավոր և տոհմիկ բնակավայրը և ժողովրդի փրկված բեկորների ձեռքով, դեգերումներից հետո, հանգրվանում Մաշտոցյան Մատենադարանում՝ կրելով 7729 համարը, «Մշո Ճառքնտիր» մականունը և «Հայերեն ամենամեծ ձեռագիրը» պատվանունը։

Ա.

Հիրավի, Մշո Տօնականը աչքի է ընկնում և հայերեն մյուս ձեռագրերից առանձնանում է նախ և առաջ իր պատկանելի մեծությամբ։ Առաջին կեսը կշռում է 15,2 կգ, երկրորդը՝ 12,3 կգ, ընդամենը 27,5 կգ։ Մագաղաթյա հսկայի յուրաքանչյուր թերթը 70,5×55,3 սմ մակերես ունի։ Այդ մեծության մագաղաթ կարելի էր պատրաստել միայն արջառի կամ երինջի մորթույց։ Ձեռագիրը ստվար է, և թերթերի քանակը այժմ 600 է։ Էջերը հոսսյուն են, սյունակը՝ 10,5×51,5 սմ մեծությամբ, 45-ական՝ տողերով։ 15 սանտիմետրանոց եզրային լուսանցքները, որոնք ավելի լայն են, քան շատ ձեռագրերի ամբողջական թերթերը, նկարիչը ազատորեն զարդարել է ինքնատիպ լուսանցազարդերով։ Ձեռագիրը գրված է խոշոր, ուղղաձիգ երկաթագրով, ամեն մի թերթում շարելով մոտավորապես 4860 տառ (6 սյունակ×45 տող×18 տառ)։ Արդի վիճակում ձեռագիրը բաժանված է երկու մասի, որոնցից պակասում են բոլորովին պոկված-հանված մի քանի տասնյակ թերթեր։ Մնացած թերթերից շատերի լուսանցազարդերը, գլխազարդերը կամ ամբողջ լուսանցային շերտը անխղճաբար կտրված-հանված է։ Ձեռագրից պոկված թերթերից 16-ը տարվել է Վենետիկ, 1847—50 թթ.⁵, ձեռագիրը երկու մասի բաժանելուց հետո։

մանաց գիր» և կարծում է, թե ուրիշ տեղից է վերցված, այնինչ արտագրված պետք է լինի Մշո Տօնականից («Տարօն-Տուրուբերանի վանքերը», Վիեննա, 1953, էջ 37)։ Հ. Ոսկյանը կասկածելի է համարում նաև Չորտուանել Մամիկոնյանի «Կտակը» (անդ, էջ 42)։

3 Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 98—99, 396—397։ «Այս «Կտակ»-ի վավերականությունը կասկածելի է»—գրում է Գ. Հովսեփյանը (Գաբելին կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա., Անթիլիաս, 1951, էջ 292, ծանոթ. 3 (Այսուհետև՝ «Յիշատակարանք»)։ «Այս յիշատակարանը ձեռագրում այլևս չկա»,—գրում է Մ. Տեր-Մովսիսյանը «Ճառքնտիրների հավաքածուում» (Մ. Տեր-Մովսիսյան, Ցուցակ ձեռագրաց (անտիպ), Ճառքնտիրներ ժե, Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակներ)։ Այնինչ «Կտակը» գրված է հենց Տօնականի առաջին թերթի երկրորդ երեսում. թերթը համարյա կեսից պատռված է։

4 Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ, հտ. Բ, էջ 468 (այսուհետև՝ Բ. Սարգիսյան, Ցուցակ վենետիկի)։

5 «Վ. Հ. Ներսես Սարգսյան ի Հայո ճանապարհորդած միջոցին ստացեր և հղեր կամ անձամբ օերեր է ի վենետիկ։ Ձեռագրիս ստացման հիշտ պատմությունն արդեն Զմյուռնիա հրատարակվող Արալույս Արարատեան» երկշաժաթաթերթին մեջ (1868, էջ 863) մերձավոր ժամանակակից և ականատես մեկը տեղն ի տեղը պատմած է, որով կը ջրվի ժողովրդական կամ լրագրաց մեջ տարածված արտոռոց լուրը», (Բ. Սարգիսյան, Ցուցակ վենետիկի, Բ, էջ 478)։ Լրագրի այդ հա-